

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ



Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Էդուարդ Բաբայանի կողմից

ԱՐՈՎՅԱՆ 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ.....	5
ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ).....	12
2.1 ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՆԵՐԻ.....	15
ԳԼՈՒԽ 3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2023 Թ. ԾՐԱԳԻՐԸ	67
ԳԼՈՒԽ 4. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ	69
ԳԼՈՒԽ 5. ՀԱՄԱՅՆՔԻ 2023 Թ. ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ.....	72

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը (այսուհետ՝ ՏԱՊ) համայնքում առկա ֆինանսական, վարչական, մարդկային և սոցիալական ռեսուրսները կառավարելու գործիք է, այն փաստաթուղթ է, ուր հստակորեն ներկայացվում են սոցիալական, տնտեսական, մարդկային, բնական և այլ ռեսուրսների ներդրման միջոցով համայնքի զարգացմանն ուղղված՝ 2023թ. համար համայնքի ռազմավարությունը, ծրագրերը և միջոցառումները:

Արժվյան համայնքի ՏԱՊ-ը մշակվել է հետևյալ հիմնական նպատակներով՝

- ✓ համակարգել համայնքի 2023թ. անելիքները,
- ✓ սահմանել սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, գնահատել համայնքի ներքին ռեսուրսները, հաշվառել համայնքում ներդրվող արտաքին ռեսուրսները, հաշվարկել համախառն ռեսուրսները և բացահայտել պակասությունը (դեֆիցիտը),
- ✓ համախմբել համայնքի հնգամյա զարգացման ծրագրով (այսուհետ՝ ՀՀԶԾ) համայնքում 2023թ. համար նախատեսվող բոլոր ծրագրերը և միջոցառումները՝ համայնքի տեսլականի և հիմնական նպատակների իրականացման շուրջ,
- ✓ շաղկապել նախատեսվող ծրագրերը և միջոցառումները դրանց իրականացման արդյունքների հետ՝ կիրառելով ՀՀԶԾ-ի ոլորտային ծրագրի «Տրամաբանական հենքը»,
- ✓ որոշակիացնել նախատեսվող ծրագրերի և միջոցառումների իրականացման ֆինանսական աղբյուրները և միջոցները, պատասխանատուները և ժամկետները, մշակել տվյալ տարվա ՏԱՊ-ի իրականացման մոնիթորինգի և գնահատման պլանը /ՄԳՊ/:

Համայնքի տարեկան աշխատանքային պլանը ռազմավարական մոտեցումների և ընդհանուր գործողությունների միջոցով համայնքի առջև դրված նպատակներին հասնելու մեթոդն է: ՏԱՊ-ի միջոցով սահմանվում է գործողությունների՝ տարրերի համահունչ մի շարք, որոնք միտված կլինեն գալիք տարում մեր առջև դրված խնդիրների առավել արդյունավետ լուծմանը: ՏԱՊ-ը համահունչ է նրան, ինչ անում ենք և ինչին ցանկանում ենք հասնել, բայց նաև համապատասխանեցնում ենք մեր ֆինանսական միջոցներին և առավելապես միտված են դրանց ավելացմանը, ինչպես նաև սահմանում է առաջնահերթություններն ու սկզբունքները:

Յուրաքանչյուր գործողություն պետք է նպաստի ՏԱՊ-ի նպատակին, իսկ ՏԱՊ-ի ձեռքբերումները՝ որպես ամբողջություն՝ համայնքի զլոբալ նպատակին: Դրանք պետք է նաև

փոխկապակցված լինեն, ցույց տան համայնքի միջնաժամկետ պլանները (1 տարվա համար) և պետք է համապատասխանեն երկարաժամկետ՝ ՀՀԶԾ- ում ներկայացված միջոցառումների շարքին:

Որպես գործառնական փաստաթուղթ՝ ՏԱՊ-ը ուղղված է համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին՝ համայնքապետին, համայնքի ավագանուն, վարչական տարածքի ղեկավարներին, պետական ոչ առևտրայի և առևտրային կազմակերպություններին, թե ինչի են նրանք նախատեսում հասնել մեկ տարվա ընթացքում:

Արժվյան համայնքի 2023թ. տարեկան աշխատանքային պլանը բաղկացած է 5 գլուխներից.

1-ին գլխում սահմանվում է համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները:

2-րդ գլխում ներկայացվում է համայնքի 2023 թվականի ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների):

3-րդ գլխում ներկայացվում է համայնքային գույքի կառավարման 2023 թվականի ծրագիրը:

4-րդ գլխում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի ֆինանսավորման պլանը:

5-րդ գլխում ներկայացվում է համայնքի ՏԱՊ-ի մոնիթորինգի և գնահատման պլանը:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Արժվյան համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը: Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել բարեկեցիկ և մրցունակ մյուս համայնքների նկատմամբ:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Արժվյան համայնքի զարգացման ակնկալիքները և դրան ուղղված ջանքերը միտված են ստեղծելու «կայուն համայնք»՝ ապահոված առաջադիմելու բոլոր պայմաններով:

«Կայուն համայնք» հասկացությունը չի բնութագրում միայն մեկ թաղամասը, քաղաքը կամ մեկ բնակավայր: «Կայուն համայնք»-ը ֆիքսված երևույթ չէ, այլ շարունակաբար փոփոխվում է իր բնակիչների սոցիալական և տնտեսական կարիքները բավարարելու համար՝ պահպանելով շրջակա միջավայրի կարողությունները:

Համայնքը ձգտում է կյանքի ավելի լավ որակ իր բոլոր բնակիչների համար՝ միաժամանակ պահպանելով ժամանակի ընթացքում բնության գործելու ունակությունը՝ նվազագույնի հասցնելով թափոնները, կանխելով աղտոտումը, խթանելով արդյունաբերությունը և զարգացնելով տեղական ռեսուրսները՝ տեղական տնտեսությունը աշխուժացնելու համար:

Տնտեսական շատ ոլորտներում առկա են պոտենցիալ զգալի զբաղվածության հնարավորություններ, որոնք համահունչ են զարգացման ավելի կայուն օրինաչափություններին: Վերանախագծված և բարելավված ենթակառուցվածքները, գիտելիքի վրա հիմնված ծառայությունները, բնապահպանական տեխնոլոգիաները, բնական ռեսուրսների բարելավված կառավարումն ու օգտագործումը և զբոսաշրջությունը հարուստ ոլորտներն են մասնավոր հատվածի ներդրումների համար՝ հիմնված համայնքը կառավարող մարմնի աջակցող քաղաքականության և ընդլայնված ուսուցման վրա:



6 ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՅՈՒՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ



Կյանքի մակարդակը կենտրոնանում է հիմնական նյութական գործոնների վրա, ինչպիսիք են եկամուտները և տնտեսական հնարավորությունները: Այն կարող է նաև ընդգրկել այնպիսի գործոններ, ինչպիսիք են տնտեսական և քաղաքական կայունությունը, քաղաքական և կրոնական ազատությունը, շրջակա միջավայրի որակը, կլիման և անվտանգությունը:



Տեխնիկական արդյունավետ միջոցների և նորարարությունների կիրառմամբ՝ կատարվող աշխատանքների արտադրողականության բարձրացում: Տեխնոլոգիական զարգացումը, ըստ էության նշանակում է համայնքի սպասարկման համակարգում նորագույն տեխնոլոգիաների ներդրում, էներգետիկայի, գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտում:



Համայնքային ենթակառուցվածքների կառավարման հեշտացման համար դրանք բաժանում ենք երկու խմբի: Կոշտ ենթակառուցվածքների վերազինմամբ կիթանենք համայնքի ժամանակակից արդյունաբերական ցանցի գործունեությանը: Այս ուղղությամբ պետք է ուշադրություն դարձնենք ճանապարհների, տրանսպորտային կայանատեղիների, երկաթուղային տրանսպորտի զարգացմանը:

Փափուկ ենթակառուցվածքները վերաբերվում են բոլոր այն հաստատություններին, որոնք պահպանում են համայնքի առողջապահական, սոցիալական, բնապահպանական և մշակութային ոլորտներին: Այս ոլորտներում մեր կողմից կատարվող աշխատանքներն են՝ բուժհաստատությունների վերազինում, կրթական ծրագրերի իրականացում, բնակչության վիճակագրություն, զբոսայգիներ և հանգստի գոտիների կառուցում, իրավապահ մարմինների և արտակազ իրավիճակների ծառայությունների որակի բարելավում:



Համայնքի կառավարման գործում բնակչության ներգրավման և կատարվող աշխատանքների թափանցիկության ապահովման միջոցով բացահայտել համայնքում առկա խնդիրները, թույլ և ուժեղ կողմերը:



Համայնքում հավաքել ռեսուրսներ, կապիտալ, տվյալներ և տաղանդներ: Օգտագործել դրանց ներուժը տնտեսական կյանքի զարգացման համար: Այս համակենտրոնացման հիմքում համայնքը դարձնել նորարարության աշխույժ տնտեսական կյանքի և սոցիալապես ապահոված կենտրոն:



ՏԱՊ-ն առաջարկում է բնապահպանական և կանաչապատման քաղաքականություն, որը ներառում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազում, կանաչ տարածքների ընդլայնում և սանմաքրման աշխատանքների կազմակերպում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	45.8	70
Բնակչության զբաղվածության աճ	1.2 %	1.5 %
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	88211 ¹	89000
Համայնքում հաշվառված նպաստառուների թիվը. ² Ընտանեկան նպաստառուներ՝ Սոցիալական նպաստառուներ՝	1781 819	1700 750
Գրանցված գործազուրկների թիվը՝ ³	1119	1000
Գրանցված գործազուրկների մեծամասնությունը ըստ տարիքային խմբի՝ 35-44	354	200

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
ԸՆԴՀԱՆՈՒՐ			
Ապահովել համայնքային ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանումը, թափանցիկ, լիարժեք և արդյունավետ կառավարումը, քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցումը	Համայնքի (հաշվառված) բնակիչների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ, %	1,2	1,3
	Համայնքի աշխատակազմում բարձրագույն կրթություն ունեցող աշխատակիցների տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ, %	74%	75%
	Հայեցողական պաշտոն զբաղեցնողների կազմում բարձրագույն կրթություն ունեցողների տեսակարար կշիռն, %	98%	99%
	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	95%	98%
	Քաղաքացիների սպասարկման գրասենյակ (ՔՄԳ) դիմող այցելուների թվի տեսակարար կշիռը համայնքի բնակիչների ընդհանուր թվի մեջ, %	42%	50%
	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) ՏԻՄ-երի գործունեությունից, մատուցվող հանրային ծառայություններից, %	90%	92%
	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը, %	105%	110%

¹ 01.07.2022թ.-ի դրությամբ

² 2022 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Միասնական սոցիալական ծառայության Արևմտյան տարածքային կենտրոնի ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված նպաստառուների թիվը:

³ 2022 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ Միասնական սոցիալական ծառայության Արևմտյան տարածքային կենտրոնում գրանցված գործազուրկների թվաքանակը:

	Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր մուտքերի կազմում, %	51%	53%
	Համայնքի բյուջեի ընդհանուր ծախսերի կազմում վարչական բնույթի ծրագրերի գծով ծախսերի տեսակարար կշիռը, %	67%	75%
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ			
Աջակցել համայնքում իրականացվող պաշտպանության ոլորտի ծրագրերին	Պաշտպանական համակարգի կատարելագործմանը միտված ծրագրերի թիվը	7	9
Աջակցել համայնքում իրականացվող արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական պաշտպանության ոլորտի ծրագրերին	Համայնքի բնակիչների բավարարվածությունը (հարցումների հիման վրա) քաղաքացիական պաշտպանության ոլորտում իրականացվող միջոցառումներից	63%	70%
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ			
Իրականացնել համայնքի բնակարանային ֆոնդի արդյունավետ կառավարումը, ունենալ մաքուր, բարեկարգ և լուսավոր համայնք Օժանդակել համայնքային նոր ենթակառուցվածքների ստեղծմանը Ապահովել համայնքի քաղաքաշինական զարգացման նորմերը	Համայնքի բնակիչների բավարարվածությունը քաղաքաշինության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	75%	80%
ԿՈՍՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ			
Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ	Համայնքի բնակիչների բավարարվածությունը կոմունալ տնտեսության ոլորտում մատուցվող ծառայություններից, %	70%	75%
ՀՈՂՕՖՏԱԳՈՐԾՈՒՄ			
2023 թվականին համայնքնապատկան գույքի գույքագրման, օտարման քաղաքականության մշակում	Կանխել ապօրինի հողօգտագործումը, գեոդեզիա և քարտեզագրում	85%	88%
ՏՐԱՆՍՊՈՐՏ			
Բարելավել համայնքի տարածքում ընդհանուր օգտագործման միջոցների կանգառի կետերի կահավորումը, շահագործման և պահպանման ծառայությունների որակը	Ներհամայնքային ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների և տաքսիների որակից բնակչության բավարարվածության աստիճանը, %	70%	75%
	Ճանապարհային երթևեկության նշաններով նշագծված փողոցներից բնակչության և ուղևորների բավարարվածությունը, %	75%	80%
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ			

Առևտրի և ծառայությունների ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարելավում	Բացօթյա առևտրի համակարգման աշխատանքների որակի բարձրացում	Բավարար	Լավ
	Գովազդային ծառայությունների մատուցման որակի բարելավում	Բավարար	Լավ
ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ՄՇԱԿՈՒՅԹ, ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՄՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐԿՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ			
Ապահովել համայնքում նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ծառայությունների ընթացիկ մակարդակի պահպանում և որակյալ ծառայությունների մատուցում	Համայնքի բնակիչների համար կրթական ծառայությունների հասանելիության մակարդակի բարձրացում, %	30%	35%
	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող նախադպրոցական կրթության ծառայությունից, %	92%	95%
	Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	90%	93%
	Արտադպրոցական դաստիարակության խմբակներում ընդգրկված երեխաների թվի տեսակարար կշիռը դպրոցական տարիքի երեխաների ընդհանուր թվի մեջ, %	14%	16%
Ապահովել ՏԻՄ-երի կողմից համայնքի բնակչությանը մշակույթի և երիտասարդության հետ տարվող որակյալ և մատչելի ծառայությունների հասանելիությունը	Մատուցվող մշակութային ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, %	75%	78%
	Գրադարանից օգտվողների թվի տարեկան աճ, %	50%	52%
Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում որակյալ ծառայությունների մատուցումը	Տարվա ընթացքում հանրապետական և միջազգային մրցաշարերում համայնքի երեխաների հաջողությունները (գրավված տեղերը / շահած մեդալները/ գավաթները/ պատվոգրերը), հատ	16	20
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ			
Առողջապահության ոլորտում նպաստել համայնքի բնակիչների առողջության պահպանմանը և բժշկական սպասարկման արդյունավետության բարձրացմանը, տարբեր բժշկական կենտրոնների և ծառայությունների հետ համագործակցությանը	Բժշկական օգնություն և սպասարկում անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում օգտվողների, %	35%	40%
Օգնել համայնքի կարիքավոր, վիրավոր և զոհված ազատամարտիկների ընտանիքներին, սոցիալապես անապահով ուսանողներին և հասարակական կազմակերպություններին համայնքում սոցիալական ծրագրերի իրականացնելու համար բարելավելու նրանց սոցիալական վիճակը	Սոցիալական ծրագրի շահառուների բավարարվածությունը իրականացվող ծրագրից, %	90%	92%

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ			
2023 թվականի ընթացքում գյուղատնտեսության ոլորտում ջրամատակարարման ծառայության անխափանության ապահովում, պոմպերի ձեռքբերում, նորոգում, գնման գործընթացի կազմակերպում՝ ջրագծի կառուցման աշխատանքների համար	Մշակվող հողատարածքների տեսակարար կշիռը ընդհանուր գյուղատնտեսական նշանակության հողերի մեջ, %	36%	40%
	Ոռոգման համակարգի վերանորոգում, %	60%	65%
ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱ			
Աջակցություն անասնաբուժական ծառայության աշխատանքներին	Բնակիչների բավարարվածությունը մատուցվող անասնաբուժական ծառայություններից	Բավարար	Լավ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ			
Աջակցել համայնքում զբոսաշրջային կենտրոնների ընդլայնմանը	Համայնքի տարածում զբոսաշրջային խմբերի այցելության մակարդակը %	40	42
ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ			
Նպաստել համայնքի կառավարմանը բնակչության ներգրավմանը	Բնակչության ներգրավվածության մակարդակը ՏԻՄ կառավարմանը	Բավարար	Լավ

ԳԼՈՒԽ 2. ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ

ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏՆԵՐԻ)

Աղյուսակ 3.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահոված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
Ոլորտ 1. Ընդհանուր		
1.	Թափանցիկ և արդյունավետ կառավարում	878 500.0
2.	Կառավարչական աշխատանքների կազմակերպման արդիականացում	20 000.0
3.	Համայնքի ենթակառուցվածքների ջեռուցման համակարգերի փոխում, վերազինում	42 240.0
4.	Արժվանի համայնքապետարանի վարչական շենքի բարեկարգում	54 000.0
5.	Համայնքի փողոցներում թեքահարթակների կառուցում	3 228.0
6.	Համայնքի տարածքում հասարակական գույքաբանների կառուցում	26 400.0
7.	Ավտոպահեստամասերի ձեռքբերում	70 000.0
Ընդամենը		1 123 996.0
Ոլորտ 2. Պաշտպանություն		
1.	Պաշտպանության ոլորտ	20 000.0
2.	Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն	--
3.	Ապաստարանների կառուցում	--
Ընդամենը		20 000.0
Ոլորտ 3. Քաղաքաշինություն		
1.	Ասֆալտապատում	1 630 600.0
2.	Ասֆալտի փոսային վերանորոգում	120 060.0
3.	Լուսավորություն	176 520.0
4.	Աստիճաններ	199 200.0
5.	Բնակարանների գազաֆիկացում	21 120.0
Ընդամենը		2 147 500.0
Ոլորտ 4. Կոմունալ տնտեսություն և շրջակա միջավայրի պահպանություն		
1.	Համայնքի վարչական տարածքում աղբահանության, սանիտարական մաքրման և բարեկարգման աշխատանքների կազմակերպում	631 000.0
2.	Մեքենա-մեխանիզմների համալրում	20 000.0
3.	Համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների արդիականացման աշխատանքներ	55 000.0
4.	Համայնքի բնակֆոնդի տանիքիների վերանորոգման շինարարական աշխատանքներ	20 000.0
Ընդամենը		726 000.0
Ոլորտ 5. Հողօգտագործում		
1.	Գեոդեզիա և քարտեզագրում	2 000.0
Ընդամենը		2 000.0

Ոլորտ 6. Տրանսպորտ		
1.	Ճանապարհների գծանշում	40 000.0
2.	Խելացի լուսացույցների տեղադրում	30 000.0
3.	Ճանապարհային նշանների տեղադրում	5 000.0
Ընդամենը		75 000.0
Ոլորտ 7. Առևտուր և ծառայություններ		
2023 թվականին Առևտրի և ծառայությունների ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում		--
Ընդամենը		--
Ոլորտ 8. Կրթություն, Մշակույթ, Ֆիզիկական կուլտուրա և սպորտի, երիտասարդության հարցեր		
1.	Համայնքում նախադպրոցական դաստիարակության կազմակերպում	767 000.0
2.	Համայնքում արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	397 500.0
3.	Նախադպրոցական հաստատությունների շենք-շինությունների կառուցման և կապիտալ վերանորոգման աշխատանքներ	195 000.0
4.	Նախադպրոցական հիմնարկների համար գույքի ձեռք բերում	100 000.0
5.	Մշակութային, մարզական և հոգևոր կյանքի բարելավում	8 000.0
6.	Մարզական միջոցառումների կազմակերպում և անցկացում	6 000.0
Ընդամենը		1 473 500.0
Ոլորտ 9. Սոցիալական պաշտպանություն, առողջապահություն		
1.	Հիվանդանոցային ծառայություն	5 000.0
2.	Աջակցություն համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին	7 000.0
3.	Աջակցություն համայնքի հասարակական կազմակերպություններին	22 000.0
Ընդամենը		34 000.0
Ոլորտ 10. Գյուղատնտեսություն		
1.	Ռոտզման համակարգի վերանորոգում, ընդլայնում	68 315.0
2.	Մանկապարտեզների ռոտզման համակարգի վերականգնում	8 608.0
Ընդամենը		76 923.0
Ոլորտ 11. Անասնաբուծություն և բուսասանիտարիա		
1.	Անասնաբուծական ծառայության կազմակերպում	6 720.0
Ընդամենը		6 720.0
Ոլորտ 12. Զբոսաշրջություն		
2023 թվականին զբոսաշրջության ոլորտում ծրագրեր և միջոցառումներ չեն նախատեսվում		--
Ընդամենը		--
Ոլորտ 13. Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցություն		
1.	Մասնակցային բյուջետավարման պիլոտային ծրագիր	10 000.0
Ընդամենը		10 000.0
Ընդհանուր		5 695 639.0

Աղյուսակ 4.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահոված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ. դրամ)
Ոլորտ 3. Քաղաքաշինություն		
1.	Ենթակառուցվածքների շենքերում արևային մարտկոցների տեղադրում	200 000.0

2.	Էլար թաղամասի ոռոգման համակարգի 2-րդ փուլի անցկացում	80 000.0
Ընդամենը		280 000.0
Ոլորտ 8. Կրթություն, Մշակույթ, Ֆիզիկական կուլտուրա և սպորտի, երիտասարդության հարցեր		
1.	Աբովյանի N-5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տանիքի վերակառուցում	20 000.0
Ընդամենը		20 000.0
Ոլորտ 6. Տրանսպորտ		
Նոր խելացի կանգառների և կանգառների կառուցում		90 000.0
Ընդհանուրը		390 000.0

**2.2 ՏԱՊ-ՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ
ՀԵՆՔԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՈԼՈՐՏՆԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ**

Վիճակի նկարագիր		
Ցուցանիշներ	Չափի միավոր	Քանակ
Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների (ՀՈԱԿ) քանակը	հատ	24
Սպասարկման գրասենյակում ընդունված դիմումների թիվը	հատ	6791 ⁴
Համայնքի հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի գանձման ավտոմատացված համակարգեր	հատ	2
Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը	միավոր	190

Հիմնախնդիրներ՝

- ⚠ Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացում՝ մասնավորապես դիմումին պատասխանելու միջին ժամանակի կրճատում:
- ⚠ Համայնքում առկա խնդիրների համակարգում ըստ առաջնահերթությունների լուծումների տրամադրում:
- ⚠ Կայուն և սոցիալական միջավայրի ապահովում, բնակչության առանձին նպատակային խմբերի համար տեղական, սոցիալական ծրագրերի կազմում և իրագործում:
- ⚠ Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորում՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող որոշումների կայացմանը:
- ⚠ Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության ապահովում:

⁴ 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների քանակը:

2023 թվականին նախատեսվող ծրագրեր						
1.	Ծրագրի անվանում ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	Անմիջական նպատակ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Սկիզբ և ավարտ	Ֆին. աղբյուր	Պատասխանատու
	Համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարում, որակյալ ծառայությունների մատուցում:	Բարելավել բնակչությանը մատուցվող հանրային ծառայությունների որակը: Ապահովել աշխատակազմի բնականոն գործունեությունը, թափանցիկ կառավարումը և բնակչությանը ծառայությունների մատուցումը:	- Համայնքի ավագանու անդամների քանակը – 27 - Համայնքային ծառայողների քանակը – 94 որից կին՝ 62 - ՔԿԱԳ-ի աշխատակիցների քանակը – 3 - Համայնքապետարանի աշխատակազմի աշխատանքային օրերի թիվը տարվա ընթացքում - 255 օր - Տարվա ընթացքում ՔԿԱԳ-ի կողմից սպասարկված հաճախորդների թիվը - 15 000	2023 թ. ընթացքում	2023 թ. համայնքային բյուջե	Համայնքի ղեկավար, ավագանու անդամներ, աշխատակազմի քարտուղար, բաժնի պետեր
	Միջոցառումներ՝ ➡ Աշխատակազմի բնականոն գործունեության ապահովում: ➡ Մասնագիտական ծառայությունների ձեռք բերում: ➡ Համայնքի հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի գանձման ավտոմատացված համակարգով աշխատանքների իրականացում: ➡ Հանրային լսումների կազմակերպում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝ ✓ Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր- 878 500.0 հազար դրամ ✓ Աշխատակազմում առկա տեղեկատվական և հեռահաղորդակցության համակարգեր - 3 ✓ Համայնքի հողի հարկի, գույքահարկի և անշարժ գույքի գանձման ավտոմատացված համակարգեր – 2			

2.	ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ					
	Համակարգչային տեխնիկայի ձեռք բերում:	Համայնքի աշխատակազմին ապահովել արդի պահանջներին համապատասխան սարքավորումներով և ստեղծել հարմարավետ աշխատանքային միջավայր, վերազինված ժամանակակից սարքավորումներով:	- Աշխատակազմում առկա համակարգչային սարքերի և սարքավորումների թիվը - 190 - Ձեռք բերվող համակարգիչային մասերի և սարքերի նախատեսվող քանակը- 245 հատ - Ձեռք բերվող լարերի նախատեսվող քանակը – 600 մետր - Համայնքի պաշտոնական ինտերնետային կայքի գործունեության օրերի թիվը-365	2023 թ. ընթացքում	2023 թ. համայնքային բյուջե	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, բաժնի պետեր
	Միջոցառումներ՝  Հաշվառել փոխարինման ենթակա համակարգչային տեխնիկան:  Կազմել մրցույթային փաթեթը և կատրել գնման գործընթացը:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր – 20 000. 0 հազար դրամ  Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ - 3			
3.	ԶԵՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՓՈԽՈՒՄ, ՎԵՐԱԶԻՆՈՒՄ					
	Անխափան ջեռուցման համակարգ համայնքի ոչ առևտրային ենթակառուցվածքներում:	Բարելավել համայնքի ենթակառուցվածքների ջեռուցման համակարգերի որակը, բարձրացնել դրանց աշխատանքի արդյունավետությունը, դարձնել առավել էներգիախնայող:	- Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների ջեռուցման համակարգի սպասարկման որակը – լավ - Համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ջեռուցման համակարգի սպասրկում և ընթացիկ վերանորոգում – 70 %	2023թ. հունվար-դեկտեմբեր	2023 թ. համայնքային բյուջե	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, համայնքապետի օգնական, բաժնի պետեր, ՀՈԱԿ-ի տնօրեն

	Միջոցառումներ՝  Փոփոխման ենթակա ջեռուցման համակարգեր ունեցող համայնքային ենթակառուցվածքների հաշվառում:  Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմում:  Վերանորոգման աշխատանքների կազմակերպում:  Ջեռուցման կաթսաների հետագա սպասարկում սպասարկում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցներ – 42 240. 0 հազար դրամ  Համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների քանակը, որտեղ կա ջեռուցման համակարգ – 24			
4.	ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ					
	Աբովյանի համայնքապետարանի վարչական շենքի դիմաց աստիճանների, հարթակի հիմնանորոգում, լուսամուտների փոխարինում և սանհանգույցների վերանորոգում:	Համայնքի աշխատակազմին ապահովել հարմարավետ պայմաններ աշխատանքի կազմակերպման համար:	 Վարչական շենքի վերանորոգված արտաքին պատեր - 42 ք.մ  Վարչական շենքում գործող սանհանգույցների քանակը - 12  Համայնքապետարանի աշխատակիցների համար աշխատանքի կազմակերպման հարմարավետ միջավայրի ստեղծում – լավ	2023թ. հունվար- դեկտեմբեր	2023 թ. համայնքային բյուջե	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար
	Միջոցառումներ՝  Վարչական շենքի հարակից տարածքի վերանորոգման շին. աշխատանքների կազմակերպում:  Մրցույթի հայտարարում, կապալառու ընկերության ընտրություն:  Պարբերական մոնիթորինգի որակի հսկողության իրականացում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)  Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր – 54 000. 0 հազար դրամ  Վարչական շենքի հարակից սավաճաքապատ տարածքի մակերես- 300 ք/մ  Վարչական շենքի հարակից ասֆալտապատման ենթակա տարածքի մակերես – 600 ք/մ  Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերի թիվ – 12			

5.	ԹԵՔԱՀԱՐԹԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ					
	Աբովյանի համայնքի փողոցներում նոր թեքահարթակների կառուցում: Առկա թեքահարթակների վերանորոգում, համապատասխանեցում ստանդրտներին:	Համայնքի բնակչության համար ապահովել հարմարավետ տեղաշարժվելու պայմանները:	 Կառուցվող թեքահարթակների նախնական ընդհանուր մակերեսը - 200 ք/մ  Համայնքի հաշմանդամություն ունեցող բնակիչների տեղաշարժման ներկայիս վճակի գնահատում – բավարար	2023թ. ապրիլ-օգոստոս	Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջե	Համայնքի ղեկավար, քաղաքաշինության բաժնի պետ
	Միջոցառումներ՝  Հաշվառել այն հատվածները, որտեղ անհրաժեշտ է տեղադրել թեքահարթակները:  Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմում:  Մրցույթի հայտարարում, կապալառու ընկերության ընտրություն:  Պարբերական մոնիթորինգի որակի հսկողության իրականացում:			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)  Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր – 29 628. 0 հազար դրամ  Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերի թիվ – 4		
6.	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԶՈՒԳԱՐԱՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ					
	Աբովյանի համայնքի տարածքում հասարակական զուգարանների կառուցում:	Համայնքի բնակչության համար ապահովել հարմարավետություն և բարեկեցիկ միջավայր:	 Կառուցվող հասարակական զուգարանների նախնական քանակը - 2  Համայնքի տարածքում ներկայումս գործող հասարակական զուգարանների քանակը –ոչ	2023թ. հունվար-դեկտեմբեր	2023 թ. համայնքի բյուջե	Համայնքի ղեկավար, քաղաքաշինության բաժնի պետ
	Միջոցառումներ՝  Հաշվառել այն հատվածները, որտեղ անհրաժեշտ է տեղադրել հասարակական զուգարանները:			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)  Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր – 29 628. 0 հազար դրամ		

	Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի կազմում: Մրցույթի հայտարարում, կապալառու ընկերության ընտրություն: Պարբերական մոնիթորինգի որակի հսկողության իրականացում:		Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերի թիվ – 6			
7.	ԱՎՏՈՂԱՀԵՍՏԱՄԱՍԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ					
	Արմավյան համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքի, մեքենա-մեխանիզմների համար համապատասխան պահեստամասերի ձեռք բերում:	Պահպանել շարժական գույքի, մեքենա-մեխանիզմների բավարար աշխատունակ վիճակը, կատրել ընթացիկ սպասարկման և վերանորոգման աշխատանքները:	Համայնքապատկան մեքենաների թիվը – 92 2023 թվականին օտարման ենթակա մեքենաների թիվը – 12	2023թ. հունվար-դեկտեմբեր	2023 թ. համայնքի բյուջե	Համայնքի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, ֆինանսական և գնումների բաժնի պետեր
	Միջոցառումներ՝ Հաշվառել վերանորոգման կարիք ունեցող մեքենաները: Կազմել ձեռք բերման ենթակա պահեստամասերի ցանկը և դրանց տեխնիկական բնութագրերը: Մրցույթի հայտարարում, հաղթող կազմակերպության ընտրում: Պարբերական մոնիթորինգի, մեքենաների վիճակի ընթացիկ ստուգումների իրականացում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ) Համայնքի բյուջեով նախատեսված ծախսեր – 70 000. 0 հազար դրամ Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ – 5			

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Վիճակի նկարագիր		
Ցուցանիշներ	Չափի միավոր	Քանակ
Ապաստարաններ	հատ	Բնակելի շենքերում- 13 Դպրոցներում- 6 Կազմակերպությունների տարածքներում- 7
Օդային տազնապի ազդարարման կետեր	հատ	24
ԱԻ «Ճգնաժամային կառավարման ակադեմիա» ուսումնական պարապմունքների մասնակիցների թիվը	մարդ	15
Տարվա ընթացքում նախատեսված հատուկ տակտիկական ուսումնավարություններ	միավոր	4

Հիմնախնդիրներ՝

- ⚠ Բարեկարգել համայնքում գործող ապաստարանների վիճակը, վերականգնել անհրաժեշտ պայմանները և դրանք դարձնել համապատասխան ստանդարտներին:
- ⚠ Վերազինել օդային տազնապի ազդարարման կետերը, ստուգել դրանց աշխատունակությունը, փորձարկումների միջոցով համոզվել, որ դրանք լսելի են ամբողջ համայնքի տարածում:
- ⚠ Համայնքի երիտասարդության շրջանում խթանել ԱԻ ուսումնավարժական պարապմունքներին մասնակցությունը:
- ⚠ Հատուկ ուսումնական տազնապների և տեղեկատվական աղբյուրների միջոցով բնակիչների մոտ բարձրացնել իրազեկվածության մակարդակը արտակարգ իրավիճակներում կատարվող քայլերին:

2023 թվականին նախատեսվող ծրագրեր

1.	Ծրագրի անվանում	Անմիջական նպատակ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Սկիզբ և ավարտ	Ֆին. աղբյուր	Գնահատման եղանակ
	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ					
	❖ Մասնակցություն Կոտայքի մարզային և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարհանման պլանների ճշգրտմանը:	Աջակցել համայնքում քաղաքացիական պաշտպանության, պաշտպանության հարաբերությունների և ծառայությունների կառավարմանը:	❖ Շտաբաուսումնական վարժանքների թիվը-48 ❖ ԱԻ «Ճգնաժամային կառավարման ակադեմիա» ուսումնական պարապմունքների մասնակիցների թիվը-40	2023 հունվարից-դեկտեմբեր	Համայնքի 2023 թվականի բյուջե	Ծրագրի գնահատման համակարգ, մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) կիսամյակային և, տարեկան հաշվետվություններ
	❖ Մասնակցություն ռազմական դրության ժամանակ քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ, Պաշտպանության նախարարությանը չկցագրված ինժեներական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների քանակի ճշգրտմանը:					
	❖ Մասնակցություն գորահավաքային նախապատրաստության հարցերով մեթոդական և գործնական օգնության ցուցաբերման աշխատանքների իրականացմանը:					
	❖ Զորահավաքային պատրաստության միջոցառումներ:					
Միջոցառումներ՝  Սահմանել համայնքում պաշտպանության ոլորտի խնդիրները:  Կազմակերպել հանրային քննարկումներ պաշտպանական ոլորտի թույլ կողմերի բացահայտման համար:  Սահմանված ժամկետներում կազմակերպել ծրագրերի իրականացումը:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր – 20 000. 0 հազար դրամ  Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ – 3				

	 Ծրագրերի կատարման ավարտական ակտերի հաստատում, արդյունքների վերլուծություն:					
2.	ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻՑ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ					
	 Մասնակցություն աղետների ռիսկի կառավարման միանման օրինակելի պլանների մշակմանը և կիրառման ապահովմանը:	Աջակցել համայնքում արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանվածությանը:	Համայնքի բնակչություն	2023 թ. նոյեմբեր	Համայնքի 2023թ. բյուջե	Ծրագրի գնահատման համակարգ, մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) կիսամյակային, տարեկան հաշվետվություններ
	 «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը ուժեղ երկրաշարժի դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում:	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Համայնքապետարանի/ բնակավայրերի աշխատակազմ, կազմակերպությունների ղեկավարներ:	2023 թ. փետրվար		
	 «Բնակչության պաշտպանության միջոցառումների նյութական արժեքների և կենդանիների տարահանման կազմակերպումը և իրականացումը ջրածածկման սպառնալիքի դեպքում» թեմայով շտաբային ուսումնավարժության անցկացում:	 Փրկարար ծառայությունների աշխատանքից համայնքի բնակչության բավարարվածության աստիճանը- 40%	Արմավյան համայնքի Մայակովսկի և Բալահովիտ բնակավայրի ղեկավար կազմ, բնակիչներ	2023 թ. մայիս		

	❗ «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում վարվելակերպի կանոնները» թեմայով ուսումնավարժության անցկացում:	❗ Համայնքում հանրային անվտանգության մարկարդակի բարձրացում-50%	Համայնքի բնակչություն	2023 թ. ընթացք			
	❗ Մարզային քաղաքացիական ծառայության շտաբի պետերի հետ հրամանատարական պատրաստության պարապմունքների անցկացում:		Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների շտաբի պետեր:	2023 թ. ընթացք			
	Միջոցառումներ՝  Արտակարգ իրավիճակների պայմաններում տարհանման պլանի մշակում:  Բնակչության պարենային ապահովման և պահուստային ֆոնդերի համալրում:  Ուսումնավարժանքների կազմակերպում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր - 0.0 հազար դրամ  Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող աշխատակազմի աշխատակիցներ – 3				
3.	ԱՊԱՍՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ						
	Վերակառուցել և բարեկարգել ապաստարանները, վերազինել սարքավորումներով:	համայնքապատկան համապատասխան	Ապահովել համայնքի տարածքում ստանդարտներին համապատասխան ապաստարանների առկայությունը:	Արվյան համայնքի բնակչություն	2023 թ. ընթացքում	Համայնքի բյուջե	Ծրագրի գնահատման համակարգ, մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) կիսամյակային, տարեկան հաշվետվություններ

Միջոցառումներ՝  Դիտարկել ապաստարանների ներկայիս վիճակը, դասակարգել ապաստարանները ըստ վիճակի և ըստ առաջնահերթ վերանորոգման ենթակայության:  Վերազինել ապաստարանները, կահավորել և պահել պատրաստ վիճակում:  Տարվա ընթացքում պարբերաբար կազմակերպել ապաստարանների սպասարկումը և վիճակի պարբերաբար ստուգումն ու պահպանումը:	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի տարեկան բյուջեով նախատեսված ծախսեր՝ 0.0 հազար դրամ  Ծրագրի իրականացման հարցերով զբաղվող համատիրությունների նախագահներ – 12
---	---

**ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒՄ**

Վիճակի նկարագիր		
Ցուցանիշներ	Չափի միավոր	Քանակ
Բազմաբնակարան շենք՝ այդ թվում	հատ	317
	մեկ հարկանի	40
	երկու հարկանի	10
	երեք հարկանի	1
	չորս հարկանի	12
	հինգ հարկանի	92
	վեցից-ութե հարկանի	8
	ինը և ավելի հարկանի	154
Վերելակներ	հատ	293
Բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը	քմ	95 հազ.
Բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը	քմ	110 հազ.
Փողոցների երկարությունը	կմ	330

Հիմնախնդիրներ՝

- ⚠ Համայնքում տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:
- ⚠ Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վիճակի բարելավման անհրաժեշտություն:
- ⚠ Փողոցների, բակային տարածքների ասֆալտի նորացման անհրաժեշտություն:
- ⚠ Մայրերի վերանորոգման հիմնախնդիր:
- ⚠ Փողոցների լուսավորության խնդիր:
- ⚠ Համայնքի ոռոգման ցանցի վերազինում:

2023 թվականին նախատեսվող ծրագրեր

1.	Ծրագրի անվանում ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ	Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝
	✿ Արովյան քաղաք Նաիրյան փողոցը՝ 470 մետր երկարությամբ 9400 ք.մ մակերեսով, Ս. Մնացականյան փողոցը՝ 550 մետր երկարությամբ 3850 ք.մ մակերեսով, 2-րդ միկրոշրջանի 7-րդ դպրոց տանող ճանապարհները՝ 260 մետր երկարությամբ 1560 ք.մ մակերեսով:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 416.400.0 հազար դրամ
	✿ Առինջ գյուղ Ստեփան Առինջեցու փողոցի 1-ին փակուղի՝ 80 մետր երկարությամբ 480 ք.մ մակերեսով, Պ. Դուրյան թաղամասի 4-րդ և 7-րդ փողոցները կապող հատված՝ 300 մետր երկարությամբ 1800 ք.մ մակերեսով, Պ. Սևակի թաղամասի 3-րդ փողոց՝ 400 մետր երկարությամբ 2200 ք.մ մակերեսով, Ա թաղամասի 2-րդ և 3-րդ փողոցը՝ 900 մետր երկարությամբ 5400 ք.մ մակերեսով, Դ. Խաչատրյան փողոցի 2-րդ նրբանցաք՝ 100 մետր երկարությամբ 600 ք.մ մակերեսով, Ջազավանքի փողոց՝ 50 մետր երկարությամբ 200 ք.մ մակերեսով:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 111.708.0 հազար դրամ
	✿ Արամուս գյուղ Գյուղի կենտրոնական փողոց՝ Զրմուղի փողոցից մինչև գյուղի վերջ՝ 350 մետր երկարությամբ 2450 ք.մ մակերեսով, 3-րդ փողոց՝ 650 մետր երկարությամբ 3300 ք.մ մակերեսով, 1-ին փողոց՝ 430 մետր երկարությամբ 2600 ք.մ մակերեսով, 2-րդ փողոց՝ 365 մետր երկարությամբ 2200 ք.մ մակերեսով:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 110.664.0 հազար դրամ
	✿ Մայսկովսկի գյուղ 12-րդ փողոցի 1-ին փակուղին՝ 100 մետր երկարությամբ 500 ք.մ մակերեսով, 13-րդ փողոցը՝ 200 մետր երկարությամբ 1000 ք.մ մակերեսով, 2-րդ փողոցի 1-ին և 2-րդ փակուղիները՝ 300 մետր երկարությամբ 1500 ք.մ մակերեսով, 1-ին փողոցի 1-ին փակուղին՝ 200 մետր երկարությամբ 1000 ք.մ մակերեսով:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 52.550.0 հազար դրամ
	✿ Կաթնաղբյուր գյուղ 5-րդ փողոցը՝ 520 մետր երկարությամբ 3400 ք.մ մակերեսով:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 35.904.0 հազար դրամ
	✿ Գետարգել գյուղ Հարություն Վերդյան փողոցի փողոցը՝ 500 մետր երկարությամբ 4500 ք.մ մակերեսով ասֆալտապատում և եզրաքարերի փոխորինում:	➡ Ծրագրի ընդհանուր արժեքը 63.060.0 հազար դրամ

	 Վերին Պտղնի գյուղ Նորավան թաղամասի 2-րդ փողոցը՝ 730 մետր երկարությամբ 8000 ք.մ մակերեսով:	 Ծրագրի ընդհանուր արժեքը 84.080.0 հազար դրամ			
	 Բալահովիտ գյուղ Ծաղկունք թաղամասի 3-րդ փողոցի 2-րդ և 3-րդ նրբանցքները՝ 420 մետր երկարությամբ 3400 ք.մ մակերեսով:	 Ծրագրի ընդհանուր արժեքը 35.904.0 հազար դրամ			
	 Պտղնի գյուղ 1-ին փողոց 1-ին նրբանցքը՝ 350 մետր երկարությամբ 1800 ք.մ մակերեսով, 4-րդ փողոցը՝ 150 մետր երկարությամբ 800 ք.մ մակերեսով:	 Ծրագրի ընդհանուր արժեքը 27.456.0 հազար դրամ			
	 Գեղաշեն գյուղ 3-րդ թաղամասի 3-րդ և 4-րդ փողոցները և դրանց միացումները՝ 1134 մետր երկարությամբ 6650 ք.մ մակերեսով, 1-ին փողոց 5-րդ փակուղի՝ 180 մետր երկարությամբ 900 ք.մ մակերեսով, 6-րդ փողոց 2-րդ փակուղի՝ 240 մետր երկարությամբ 1200 ք.մ մակերեսով:	 Ծրագրի ընդհանուր արժեքը 91.437.0 հազար դրամ			
	 Կամարիս գյուղ 2-րդ փողոցը՝ 520 մետր երկարությամբ 2500 ք.մ մակերեսով, 3-րդ փողոցի 1-ին նրբանցք՝ 320 մետր երկարությամբ 1400 ք.մ մակերեսով, 1-ին փողոցի 1-ին նրբանցք՝ 200 մետր երկարությամբ 1000 ք.մ:	 Ծրագրի ընդհանուր արժեքը 91.437.0 հազար դրամ			
	Անմիջական նպատակ	Ելքային ցուցանիշներ (քանակ, որակ, ժամկետ)	Սկիզբ և ավարտ	Ֆին. աղբյուր	Գնահատման եղանակ
	Ծրագրի իրականացման նպատակն է Աբովյան համայնքում ունենալ հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհներ, համայնքը դարձնել ավելի գրավիչ ներդրողների համար, ապահովել համայնքի շուրջ 88 211 մարդու կենսամակարդակի բարձրացումը:	 Աբովյան համայնքի փողոցների երկարությունը կազմում է 330 կմ  2022 թվականի ընթացքում կապիտալ հիմնանորոգված ներհամայնքային ճանապարհների և փողոցների թիվը – 23	01 մարտ 2023 թվական 25 դեկտեմբեր 2023 թվական	Համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցներ, Պետական բյուջեից միջոցներ	Ծրագրի գնահատման համակարգ, մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) կիսամյակային, տարեկան հաշվետվություններ

	Միջոցառումներ՝  Նախագծանախահաշվային փաստաթղթերի, փորձաքննության ծառայությունների, որակի տեխնիկական հսկողության ծառայությունների, հեղինակային հսկողության ծառայությունների և շինարարական աշխատանքների ձեռք բերման մրցույթների կազմակերպում:  Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում:  Կատարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների վերահսկողության իրականացում:  Աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում, ժամկետների պահպանման հսկողություն:  Աշխատանքների կատարման ավարտական ակտերի հաստատում:					
2.	ԱՍՖԱԼՏԻ ՓՈՍՍՅՒՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ					
	Տարվա ընթացքում Արովյան համայնքի փողոցներում առաջացած փոսերի, ասֆալտի ճեղքերի և վնասված հատվածների վերանորոգում:					
	Ապահովել համայնքային ենթակայության ճանապարհների և մայրերի պահպանման ծառայությունների մատուցումը, ունենալ բարեկարգ, կանոնակարգված փողոցներ, նվազեցնել ճանապարհատրանսպորտային պատահարների թիվը:	 Փողոցների, բակերի մայրերի ասֆալտի փոսային վերանորոգում- 17 000 ք.մ  Ճանապարհատրանսպորտային պատահարների միջին հաճախականությունը տարվա ընթացքում – 1100 վթար		01 ապրիլ 2023 թվական 25 դեկտեմբեր 2023 թվական	Արովյան համայնքի 2023 թվականի բյուջեի միջոցներ	Ծրագրի գնահատման համակարգ, մոնիթորինգի և գնահատման (ՄԳ) կիսամյակային, տարեկան հաշվետվություններ, բնակչություն
	Միջոցառումներ՝  Ներհամայնքային ճանապարհային տնտեսության պահպանություն:  Աշխատանքների տեխնիկական հսկողության իրականացում:  Աշխատանքների կատարման ավարտական ակտերի հաստատում:		Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝  Համայնքի բյուջեի միջոցներ -1 076 649.0 հազար դրամ  Փողոցների, բակերի մայրերի ասֆալտի փոսային վերանորոգում- 120 060.0 հազար դրամ  Ծրագրի իրականացման ժամանակահատվածում ստեղծվող ժամանակավոր աշխատատեղերի թիվ – 10			

3.	ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ			Մուտքային ցուցանիշներ (ներդրված ռեսուրսներ)՝		
	🔴 Արովյան քաղաք Հատիս փողոցի նոր թաղամասի լուսավորության 2200 գծամետր համակարգի կառուցում:			✓	Ծրագրի ընդհանուր բյուջեն 20.500.000 դրամ	
	🔴 Առինջ գյուղ Ձագավանքի փողոցի՝ 800 գծամետր:			✓	Ծրագրի ընդհանուր բյուջեն 7.532.000 դրամ	
	🔴 Արամուս գյուղ Տիգրանաձորի խճուղու՝ 580 գծամետրի, Ջերմատան փողոցի՝ 280 գծամետրի, Երիտասարդական թաղամասի 2-րդ փողոցի՝ 540 գծամետրի:			✓	Ծրագրի ընդհանուր բյուջեն 13.988.000 դրամ	
	🔴 Մայսկովսկի գյուղ 15-րդ փողոցների՝ 1000 գծամետր:			✓	Ծրագրի ընդհանուր բյուջեն 6.900.000 դրամ	
	🔴 Պտղնի գյուղ 10-րդ փողոցներ 370 գծամետր, 12-րդ փողոց 130 գծամետր փողոցային լուսավորության համակարգերի կառուցում:			✓	Ծրագրի ընդհանուր բյուջեն 6.600.000 դրամ	
